

ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՆՈՒՄ

ՄՐՑՈՒՑԹԻ ԿՈՂ (20-002)

Ամսաթիվ՝ 11/12/2020թ.

1. Դուք հրավիրվում եք մասնակցելու մրցույթին՝ ներկայացնելով Գնառաջարկ նախահաշվի ձևով.
2. Տեխնիկական բնութագիրը և պահանջվող քանակները, ինչպես նաև, սույն գնումների առանձնահատուկ պայմանները տրված են Հավելված 4.1-ում:
3. Դուք կարող եք գնառաջարկ ներկայացնել սույն հրավերում ցանկացած Լոտի համար¹ կամ ամբողջ տեսականու համար² կախված ապրանքի կամ ծառայության տեսակից:
4. Ձեր գնառաջարկը պետք է ուղարկվի էլեկտրոնային տարբերակով lusine@transparency.am հասցեին մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը՝ նամակի վերնագիր նշելով՝ **բաց մրցույթի մասնակցության հայտ:**

Գնառաջարկի փաթեթը պետք է ներառի հետևյալը.

- ✓ Տիտղոսաթերթ՝ Կազմակերպության վավերապայմաններով/Տե՛ս Հավելված 1/
 - ✓ Գնառաջարկ/Տե՛ս Հավելված 1.1/
 - ✓ Համապատասխան տեխնիկական կամ այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության.
5. Մատակարարի ընտրությունը իրականացվում է՝ հիմք ընդունելով ապրանքի կամ ծառայության Տեխնիկական բնութագրում նշված չափանիշներին համապատասխանելիությունը, տրամադրվող գինը, մատակարարման ժամկետները և այլն:

6. Այն գնառաջարկները, որոնք Տեխնիկական բնութագրում նշված պարամետրերից ցածր պարամետրեր կառաջարկեն, կարող են մերժվել որպես տեխնիկական պայմաններին չհամապատասխանող:

Մատակարարման և կատարման այլ պայմաններ.

- ✓ Գները սահմանելիս պետք է հաշվի առնել այն պայմանը, որ ապրանքները պետք է մատակարարվեն նշված մատակարարման վայր(եր)ը;
- ✓ Գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով, ինչպես առանց ԱԱՀ-ի³, այնպես էլ՝ ներառյալ ԱԱՀ-ը: Գները պետք է լինեն ամրագրված և ենթակա չեն որևէ փոփոխման Պայմանագրի իրականացման ընթացքում;
- ✓ Ապրանքների, ծառայությունների/աշխատանքների համար վճարումները իրականացվում են ապրանքների/ծառայությունների ձեռք բերումից հետո՝ մատակարարի բանկային հաշվին փոխանցման եղանակով: Մատակարարի պահանջով կարող է կատարվել կանխավճար, բայց ոչ ավելի, քան ապրանքների/ծառայությունների ձեռք բերման գումարի 50 տոկոսը՝ համապատասխան կանխավճարային հաշվի հիման վրա;
- ✓ ԵՐԱՇԽԻՔ. Մատակարարված ապրանքը պետք է ունենա շահագործման ժամկետի երաշխիք՝ մատակարարման պահից:

¹ Յուրաքանչյուր Լոտ կգնահատվի առանձին և պայմանագրեր կշնորհվեն առանձին՝ ամեն Լոտի ամբողջ տեսականու համար: Տեսականուց և քանակներից պակաս գնառաջարկները կմերժվեն:

² Գնառաջարկը կգնահատվի և պայմանագիրը կշնորհվի յուրաքանչյուր Լոտի համար հարթած կազմակերպությանը:

³ Ավելացված արժեքի հարկից ազատված լինելու դեպքում մատակարարին ներկայացվում է տեղեկանք:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անվանում /Description	Տեխնիկական բնութագրերը /Technical specification		Պայմանագրի տեսակը /Type of contract)
Լոտ 1 Տարացուցիչ	Տեսակը	Կոնվեկտոր	Մեկ անգամյա գնում
	Հզորություն(ՎՏ)	2000	
	Տարացման ծավալը	20-25քմ	
	Գնման քանակ	200 հատ	

Գործադիր տնօրեն _____/անուն, ազգանուն /ստորագրություն/

Ն.Ն.